ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2012 թվականի N 35 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 1992-1994 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՌՄԲԱԿՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. հունվարի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994թվականներին ռմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչներին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին>> N 53-Ա որոշման 2 կետի 2) և 4 կետի 1) ենթակետերը

ո ր ո շ ում ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ռմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավման նպատակով կնքված պայմանագրերի հիման վրա տրամադրել ֆինանսական օգնության՝ համաձայն հավելվածի:
2. Ֆինանսական օգնությունը բնակիչներին տրամադրել անկանխիկ՝ բանկային համակարգի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. մարտի 20
ք. Իջևան